ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

—

Ստացանք 1) Թէլէաից, Սա. Անդրէասեանից 25 ր., 2) Զաքաթալայից, գիմնազիստներ՝ Բարգէն Բէկ-Յովսէփեանից և Լևոն Բէկ-Յովսէփեանից 1-ական ր. 3) Թիֆլիսում, Ս. Մելիք-Փաշայանեանից - 5 ր.։ Գումարը 32 ր.։ Ուրիշն նախկին ստացված 302 ր. դեկտեմբերի հետ («Մշակ» № 222), ունենք այժմ 334 բուբլի։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐՁԸ

—

Նորին Սրբութիւն Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսին Ամենայն Հայոց

Վեհափառ Տէր.

Թիֆլիսի հայ վաճառականութիւնը, որ հանդիսանում է կովկասյայ առևտրական աշխարհի մէջ աւագադոյն անդամ իր բազմութեամբ և հնութեամբ, չէր կարող անտարբեր մնալ դէպի այն կոչը, որ Ձեր Վեհափառութիւնը բարեհաճել էր անելու իրան, հրաւիրելով, իբրև Հայաստանեայց առաքելական եկեղեցու հարազատ զաւակ և իբրև հայ ժողովրդի մի ստուար դասակարգ, մասնակցել հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ փառատօնի յօբելեանին, որի ծանուցմանը թիւնը կատարվում է այսօր էջմիածնում, իբրև համազգային հանդէս, Ձեր Վեհափառութեան նախագահութեան ներքոյ։

Վաճառականութիւնը ամենայն պատրաստակամութեամբ և համակրութեամբ ընդունեց իրան արված այդ մեծ պատիւը, նախ իբրև հարազատ զաւակ մայրենի եկեղեցու, երկրորդ՝ ի նկատի ունենալով որ ներկայ յօբելեանը մինն է այն զուարճալի յօբելեաններից, որոնց կը նախանձէին շատ և աւելի մեծ ազգեր, որովհետև քիչ ազգեր կարող են պարծենալ պատմական այնքան խոր հնութիւն ունեցող փառապանծ ակտով, որպիսին հանդիսանում է գրերի գիւտը 1500 տարի առաջ իբրև ապացոյց հայ ժողովրդի քաղաքակրթութեան խորին հնութեան։

Բայց վաճառականութիւնը ունէր և մի ուրիշ գրգիռ պատճառ՝ մասնակցելու այս մեծ յօբելեանին, վերդիրելու համար պատմական այն անհերքելի փաստը, որ եթէ հայ գրերի գիւտը կատարվեց հայոց եկեղեցու անմահ ներկայացուցիչների ջանքերով և աշխատութեամբ, հայ տպագրութիւնը իբրև ոչ պակաս կարևոր գործոն հայ ազգի քաղաքակրթութեան, իր ծաւալումը և զարգացումը պարտական է մեծ չափով նաև հայ առևտրական դասի ներկայացուցիչներին, որոնք հսկանալով տպագրութեան անգին կարևորութիւնը՝ չը խնայեցին իրանց միջոցները հայ ժողովրդին ևս հաղորդակից անելու քաղաքակրթական այդ մեծ գործնի բարիքներին։

Եւ ամենամեծ ուրախութեամբ, Վեհափառ Տէր, ընդունելով Ձեր հրաւէրը՝ զալ և երկրպագել Օշականում հանգչող Մեծ Գտչի պաշտելի աճիւններին, հայ վաճառականութիւնն իր բարոյական պարտքը համարեց նպաստել «Մարդասիրական Լուսաւորիչ», որ Ձեր Վեհափառութիւնը սահմանեց ի յաւերժացումն համազգային այս մեծ տօնի, և խնամարհաբար խնդրում է ընդունել մեր ջնչին լումայն ու թոյլ տալ մեզ պատգամաւորներիս որդիական խորին ակնածութեամբ մատուցանել Թիֆլիսի համայն հայ վաճառականութեան ջերմեռանդ և սրտաբուղխ շնորհաւորութիւնները ի դէմս Ձեր Վեհափառութեան համազգային այս փառաւոր յօբելեանի օրը, որ հայ եկեղեցու և հայ ժողովրդի նուիրական օրն է։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Համազգային Յօբելեանի առիթով Հայոց Երաշտանակ Ընկ. Վարչութիւնը իր վերջին նիստում որոշել է՝ 1) իր ներկայացուցիչն ունենալ էջմիածնում, յանձին Երաժշտ Գ. վ. Չեօրեքչեանի, 2) Ընկերութեան անդրանիկ հրատարակութիւնը ձօնել Համազգային Յօբելեանին, 3) Վարչութեան ամբողջ կազմով մասնակցել Թիֆլիսի տօնակատարութեանը։

—

Երէկ հաղորդել էինք այն մասին, թէ ի՞նչ ձևով պէտք է Կ. Հ. Բ. Ընկ. մասնակցի առաջիկայ մեծ յօբելեանական տօներին։

Ի լրումն այդ տեղեկութեան հարկ ենք համարում հաղորդել հետևեալը.

Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը որոշել է նաև Աւ. Պողոսեանի ֆոնդով հրատարակած գրքերը հանրամատչելի գներով տարածել հասարակութեան մէջ և 25 օրինակ էլ նուէր ուղարկել Գէորգիան ճեմարանի բարձր դասարանի աշակերտների համար։

—

Ալէքսանդրոպոլի ս. Փրկչի տպագրոցի կողմից էջմիածնում կատարվելիք Համազգային Յօբելեանի տօնակատարութեան իբրև պատգամաւոր գնալու են հոգաբարձութեան նախագահ Հ. Տէր-Ղազարեան և դպրոցի տեսուչ Ա. Տէրտէրեան։ Իսկ Հաւիճի հոգաբարձութեան կողմից հոգ. փոխ.-նախագահ Ե. Տէր-Մինասեան։ («Ախուր.»)

—

Լէնդօնի հայկական գաղութը և Հայոց-Միացեալ Ընկերութիւնը իրանց պատգամաւոր են նշանակել էջմիածնում համազգային յօբելեանին մասնակցելու համար պ. Արամ Բաֆֆիին։

—

Ախալցխայի հայ հասարակութեան մէջ յօգուտ դպրոցական ֆոնդի հաւաքված է 500 ր., որ յանձնված է տեղական յանձնաժողովին՝ էջմիածին ուղարկելու համար։

—

Պետերբուրգի հայկական գաղութի մէջ, ինչպէս հաղորդում են մեզ, յօգուտ դպրոցական ֆոնդի հաւաքված է մօտ 10,000 ր.։

—

Բաքուի մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ այնտեղ արդէն ձեռնարկված է դպրոցական ֆոնդի հանգանակման գործին։ Նշանակելն այնպես են ցոյց տալիս, որ Բաքումի յօգուտ դպրոցական ֆոնդի կարող է հանգանակվել աւելի քան 100,000 ր.։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնն որոշել է ուղարկել էջմիածին յօբելեանական տօներին՝ հոգաբարձութեան անդամ Յովս. Ամիրխանեանին իբրև պատգամաւոր-ներկայացուցիչ։

—

Թիֆլիսի հայ եկեղեց. դպրոցների հոգաբարձական և ուսուցչական մարմինների կողմից էջմիածին է մեկնելու յատուկ պատգամաւորութիւն՝ մասնակցելու յօբելեանական տօներին։